600.0189.30.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2018 թվականի №189Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի № 27Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի մայիսի 19-ի №27Ա որոշմամբ սահմանվել է «Ատլաս-էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այգեձոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը,

բ) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի մայիսի 19-ի №26Ա որոշմամբ «Ատլաս-էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Այգեձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0105 լիցենզիան, գործողության ժամկետը լրանալու հիմքով, 2018 թվականի մայիսի 20-ից համարվել է ուժը կորցրած,

գ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սակագինը սահմանվում է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար,

և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի մայիսի 19-ի «Ատլաս-

էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այգեձոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» № 27Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 մայիսի 2018թ.